

Ա. Լ. ԱԳՈՒԼՅԱՆ

ՄԻԶՈՒՐԻՆՑԱՆ ԽԵԶՈՐԵՆԻՆԵՐԻ ՄԻ ՔԱՂԻ  
ՍՈՐՏԵՐԻ ԱՃՈՒՄԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ  
ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ Ս Պ Պ Ե Տ Հ Ա Ռ Ա Տ  
1 9 4 2

634.17:631.52(47.925) 4830

U-13 U. 400 Lm. U. L.

U. Phragmites. Potamogeton thalictroides  
Sp. thal. unsp. sp. unknown

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ-Ի ՄԵՐԴՐՈՒԴԿՈՒՄԱՏԻ ՊՏՂԱ-  
ԲԱՆՉԱՐԱԲՈՒԽԱԿԱՆ ԳՐԱՀԱՏԱԳՈՒՄԱԿԱՆ ԱԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՏԱ-  
ՎԻ ԲԱՆԿԱՆ ԱԾՔԻ ԱԾՔ

634.172: 631.52 (47.925)

u-18

Ս. Լ. ԱԳՈՒԼՅԱՆ

Digitized by srujanika@gmail.com

ՄԻՉՈՒՐԻՆՑԱՆ ԽՆՁՈՐԵՆԻՆԵՐԻ ՄԻ  
ՔԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ԱՃՈՒՄԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ  
ԲԱՐՁՐԱՎ. ԱՆԴԱԿԻ ՊԱՅՄԱՆԵՐՈՒՄ

4836

2  
18789



**ԽՄԲԱԴՐԱՆԱԿ ՀՈԼԼԵՇՔԻՑ.**

Ն. Ն. ՊՐԱՍՏԱՎԵՐԴԻԲ.—բիոլոգիական գիտուր. դոկտոր  
Մ. Հ. ՄԱԼԻԿԱՆՆԱՅԻՆ—գյուղատնե. գիտ. թեկնածու, դաշնակ  
Ա. Ա. ԱԱՅԱԴՐՅԱՆ—ավագ գիտ. աշխատող

**Է նդե խմբագրուայամբ՝ ավագ գիտ. աժխատող**

**Ա. Մ. ՎԵՐՈՒՐՃՅԱՆ**

**Պատճ խմբագիր՝ գյուղատնե. գիտ. թեկ. դաշնակ**

**Մ. Հ. ՄԱԼԻԿԱՆՆԱՅԻՆ**

## ՄԻԶՈՒՐԻՆՅԱՆ ԽՆՁՈՐԵՆԻՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ԱՃՈՒՄԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան մեծ ռեվոլուցիան հայ ժողովրդին ազատագրելով կապիտալիզմի և դաշնակների ավազակային ոճմակի լծից՝ տնտեսական և կուլտուրական զարգացման լայն հնարավորություն տվեց նրան:

Սովետական կարգերի շնորհիվ՝ Հայկական ՍՍՌ-ի ժողովանականության մյուս բնագավառների հետ մեկտեղ՝ զարգացման լայն հնարավորություն ստացավ նաև պաղաքուժությունը: Մասնավորապես սեռապուրիկայի լեռնային շրջաններում պաղաքուժությունը զարգացնելու վերաբերյալ եղած մեր զեկավար օրգանների համապատասխան որոշումների հիման վրա՝ Այգեապարզուժական Սելիկցիոն կայանը 1934 թվից սկսեց զբաղվել չՍՍՌ-ի լեռնային շրջաններում (ուր մինչ այդ քիչ թե շատ զարգացած պտղաբուժություն չկար) պտղաբուժության որոշ հարցերի գիտական հիմնավորմամբ:

Հիմնվելով բնության մեծ վերափոխիչ ի. Վ. Միջուրինի հարըստագույն զիտառ-մեթոդական և սորտային ժառանգության վրա՝ Հայաստանի Այգեապարզուժական Գիտա-հետազոտական Սելիկցիոն կայանը առաջին անգամ սկսեց միջուրինյան պտղաբուժական ձառներ աճեցնել Հայաստանի լեռնային՝ Մարտունու, Բասարգեչարի, Լենինականի շրջաններում և պտղաբուժական հենակետ կազմակերպեց Լենինական քաղաքում՝ պտղաբուժական կուլտուրաների սորտերի ստացիոնար ուսումնակրթման ու մի շարք ագրոտեխնիկական հարցեր մշակելու համար:

Ներկայումս Հայաստանի լեռնային՝ Մարտունու, Բասարգեչարի, Նոր-Բայազետի, Դուզքենդի, Սպիտակի, Դուկասյանի, Արթիկի, Աղարանի շրջաններում խնձորենիների միջուրինյան սորտերի տակ են գտնվում տասնյակ հեկտարներ, որոնք ոնկաված են Լենինականի հենակետի նախնական փորձական տվյալների հիման վրա:

Լենինականի բարձրավանդակի պայմաններում աճող միջուրինյան խնձորենիների սորտերի բնութագրմանն անցնելուց առաջ՝ ան-

հըստեղա ենք համարում մի քանի խոսք ասել բարձրավանդակի ընտական պայմանների մասին:

Այդ իմաստով հետաքրքր ենք համարում ընդհանուր ձևով համեմատել լենինականի ու Միջուրինսկի պայմանները<sup>1)</sup>: Համեմատելով լենինականի ու Միջուրինսկի ընական պայմաններին վերաբերող բազմամյա ավալները՝ գալիս ենք այն եզրակացության, որ ջերմաստիճանի ռեժիմի տեսակետից երկու վայրերն էլ խիստ նման են: Սակայն լենինականի գարնանային ուշ ցրտերը վերջանում են քիչ ավելի ուշ, այսինքն հունիսի երկրորդ տասնօրյակում, իսկ Միջուրինսկում՝ առաջին տասնօրյակում: Աշնանային ցրտերը լենինականում սկսում են ավելի ուշ, քան Միջուրինսկում: Մթնոլորտային տեղումների քանակով Միջուրինսկն ավելի նպաստավոր պայմանների մեջ է, որովհետև տեղումների գումարը և ավելի է, և ըստ ամբաների նրանք ավելի հավասարաշափ են բաշխված:

Վեգետացիոն շրջանի տեսողությունը լենինականում քիչ ավելի է: Պետք է նշել, որ հիշյալ վայրերի ծովի մակերեսից տարբեր բարձրության վրա գտնվելու, ինչպես և արեգակնային տարբեր ճառագայթման, վեգետացիոն շրջանի տեմպերատորայի գումարի ու հաղային պայմանների մեծ տարբերությունը՝ ստեղծում է պտղատու տեսակների աճման վրա ազդող էկոլոգիական պայմանների տարբերություն:

### ԽՆՉՈՐԵՆԻՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՍՈՐՏԸՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆԱԿԱՆ ՈՒ ԱԳՐՈՑԵՆԻՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

Հողամասը գտնվում է հարթ բարձրավանդակի վրա և հյուսիսարեւյան կողմից պաշտպանված է մի փոքրիկ բարձունքով: Հողամասի հողը՝ բառ հողագետ Միքրիմանյանի ավալների՝ լեռնային սեհող է, մայր ապահները հրաբխային ժայթումների արդյունք են հանդիսանում: Հողի բնորոշ առանձնահատկություններն են.

- ա) Հումուսային հաստ մի շերտ, որ հասնում է 45—75 սմ:
- բ) Վերին հորիզոնների փոշիացածություն և ստորին շերտերի լավ արտահայտված ստրուկտուրա:
- գ) Կարրոնաաների մեծ պարունակություն ստորին շերտերում:

Ծառերը տնկված են  $8 \times 8$  մ. հեռավորությամբ: Շարքամեջյան տարածություններում մշակվում են հատապտղային կուլտուրաներ: Ամեն տարի՝ վաղ գարնան և ուշ աշնան ժամերի շուրջը՝ 2 մետր

1) Միջուրինսկին վերաբերող տվյալները վերըբեր եմ անձամբ՝ ավագ օգերեցության վելիովայից, 1935 թվին:

շառավիրդով՝ փորվում է: Վեգետացիոն շրջանում 5—6 անգամ հողը փխրեցվում է: Ամեն տարի ուշ աշնանը՝ ամեն մի ծառի տակ մըտցրվում է  $\frac{1}{4}$  ցենտներ զումաղը: Ոսողումը կատարվում է ըստ կարիքի՝ նայած տեղումներին: Ամեն տարի ծառերից կտրոններ են վերցվում բաղմացման համար, մի բան, որ չէր կարող չազգել նրանց զարգացման վրա: Սկզբնական սորտավորձարկումը կատարվել է ըստ ի. Վ. Միջուրինի անվան Պտղաբուժական Գիտա-հետազոտական ինստիտուտի մշակած մեթոդիկայի: Հիմնականում ուսումնասիրվել է սորտերի զարգացման ուժը, ցրտադիմացկունությունը, բերքատվությունը, ֆենոլոգիան, քմիտական ու տեխնոլոգիական հատկությունները: Դիտողությունները կատարված են առնվազն 6 ծառի վրա՝ ամեն մի սորտից: Մի քանի սորտի ծառերի թիվը հասնում է 25-ի:

Հ 1 աղյուսակում ցույց են տրված միջուրինյան խնձորենիների սորտերը անկիլու տարին, պտղաբության շրջանի սկզբելը և բերքատվությունը: Հենակետում եղած միջուրինյան սորտի խնձորենիներից պտղաբերության շրջանն են թեմակիսել 24-ը, որոնցից 6-ը արգեն 3—4 տարի է ինչ բերք են տալիս: Մեր հետագա շարադրության մեջ կանգ կառնենք միայն այս վերջինների վրա:

## ՍՈՐՏԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ


### ՇԱՔՐԱՆ ԿԻՏԱՑԿԱՆ

Հենակետում փորձարկվում է 1934 թվից, տնկված են 2 տարեկան անկիների Շաքրան կիտայկայի ծառը 9 տարեկան հասակում  $2\frac{1}{2}$  մետր բարձրության է հասնում, ունենալով կիսագաճաճ հարիտուս: Բունը 65 սմ. բարձրություն և 8 սմ. հաստություն ունի: Բնի և հրթինական ձյուղերի կեղեն առողջ է ու հողագույն: Սաղարթը խիտ է, կլորավուն, ցած խոնարհված ձև ունի, ճյուղերը հասնում են գետնին Հիմնական ձյուղերը դասավորված են հավասարապես, լինում են 7—10 հատ, զրանց տրամագիծը հասնում է 4—5 սմ.:

Պտղային կազմավորումները գտնվում են 1, 2, 3, 4 տարեկան րնափայտի վրա: Միամյա շվերը ծնկավոր են, ոչ թափոտ, հասնում են 50 սմ. երկարության և դարչնադույն են: Ոսպնյակները նոսր են, կլորածեկած: Աճման բողբոջները կլորավուն կոնաձևեն, թափոտ և միշտն մեծություն ունեն:

Միջին մեծության տերերը  $9,8 \times 5$  սմ. է, երկարավուն-ձվածեցիր գոգավոր երկաղացածե եղբերով, փայլուն է՝ մակերեսի կողմից գլխավոր նյարդերի շուրջը և կանաչագույն, տակի կողմից թա-

վուս է: Ներկացիան դեղնավուն է և նոսր: Տերեակիցները փոքր են, նշտարաձև, կոթունը նեղ՝ 2,7 սմ. երկարությամբ, հիմքի մոտ կարմրավուն է: Ծաղկափթթությունը հինգծաղկյա է: Ծաղիկը հարթ է,



Նկ. 1. «Շաֆրան Կիտայկայի» տերմը և պտղի կտրվածքը (բնական մեծությամբ) գծ. Ս. Ագուլյանի


բավական խռշոր, մինչև 3 սմ. տրամագծով: Պտակաթերթիկները միջակ մեծություն ունեն, հարթ են, կոկոնում բացվարդագույն են, բացվելիս՝ սպիտակ: Վարսանդի սպիները գտնվում են առեջից վեր, վարսանդները հիմքի մոտ միաձուլվում են: Առեջքների թիվը 18—20 հատ է:

Պտաւլների նկարագրությունն ու զնահատականներ: — Շաֆրան Կիտայկայի պտուղների մեծությունն ըստ տարիների փոխվել է: 1938 թ. մեկ պտղի քաշը հասնում էր 85 գրամի, բարձրությունը 56 մմ., լայնությունը 68 մմ.: 1939 թ. պտղի քաշը 75 գրամից չեր անցնում, բարձրությունը հասնում էր 42 մմ., լայնությունը 53 մմ.-ի: Շաֆրան Կիտայկայի պտուղը հարթ-կլորագուն է, համարյա շաղկամաձև, Անհավասար կերպով աճած պտուղ է պատահում: Պտղակոթը կարճ է, վերջապրության մոտ հաստ և գտնվում է խոր ձագարի մեջ: Վերների փոսիկը խոր չէ, թեթևակի կնճռոտված է: Բաժակը փոքր

է, փակը Ենթաբաժակային խողովակը խորը չէ և ունի առեշքների հետքեր: Մաշկը հասու է, յուղուա:

Պազի հիմնական գույշը հարդադեղին է՝ ծածկված վերեկից անհավասար հեռավորությամբ իջնող մուգ-կարմիր շարիխներով:

Միջուկը շաղցամաձեւ ցած է, կամերաները կիսաբաց են: Սերմերը մանր, բթածայր, զլոեթե ձվածե, բաց դարչնագույն:



Նկ. 2. «Շաֆրան» կիտայկայիշ պտուղներ

Մսանյութն սպիտակ է, հյութեղ, մանրահատիկ, քնքուշ, գինեթթվաշնամելի համով: Շաֆրան կիտայկայիշ պտուղների քիմիական կազմը (ավալաները վերցված են ՀՍՍԾ-ի Այցելապարուծական Գիտահետազոտական Կայանի քիմ. լաբորատորիայից) —ընդհանուր շաքար՝  $10\%$ , ինվերտային շաքար՝  $6,8\%$ , սախարոզներ՝  $3,73\%$ , թաղանթանյութ՝  $6,84\%$ , թթուներ՝  $0,44\%$ , մոխիր՝  $0,29\%$ , չորնյութեր՝  $14,9\%$ :

Բիոլոգիական բնուրագիր: —Փորձարկման շրջանում Շաֆրան կիտայկայիշ ծառերը լավ են ծաղկել, սառնամանիքներից չեն տուժել միայն 1940 թվին բնի և հիմնական ճյուղերի վրա վնասվածքներ առաջացան, բայց չաղեցցին ծառերի հետագա զարգացման վրա:

Պաղաքերությունն սկսվեց 5 տարեկանից՝ 1938 թվից. 1937 թվին ծաղկեցին առանձին ծառեր, բայց պտուղ չտվին: Պաղաքերության առաջին տարին ամեն մի ծառ միջին հաշվով տվեց 36 պտուղ, առանձին ծառեր տվեցին մինչև 120 խնձոր, որ քաշում էր 8 կիլո: 1939 թվին, պաղաքերության երկրորդ տարին, ամեն մի ծառ միջին

հաշվով տվեց 69 պտուղ, իսկ առանձին ծառեր մինչև 208 պտուղ, որը քաշում էր 26 կիլո:

Պաղաթաթափությունը չնչին է: Կարկտահարությունից պառազները քիչ են վեավում, որովհետև վերքերը շուրջ են բռնվում և կազմում են խցանային շերտ: Անյակային պայմաններում Շափրան կիտայիշայի պատուղներն ապրում են 15—25 օր:

Օգտակար բեղմնավորման տոկոսը՝ բնական փոշուման դեպքում կազմում է 13,3<sup>0/0</sup> Մ. Համբարձումյանի տվյալներով այս սորտի լավագույն փոշուաղը կմոնային-թենան է, որը տալիս է օգտակար բեղմնավորման 20,7<sup>0/0</sup>:

Սորտի փենոլզիան:—1938-ից մինչև 1941 թվի ընթացքում ֆենոֆազաների հիմնական մոմենտների վերաբերյալ զգալի տատանումներ կան: Վեգետացիայի սկիզբը նշվել է ապրիլի 14-ից 30-ը, ժաղկման սկիզբը՝ մայիսի 8-ից 23-ը, պտղահավաքի սկիզբը՝ օգոստոսի 23-ից 27-ը, շվերի աճման վերջը հուլիսի 8-ից 28-ը, մասայական տերեսաթափի վերջը, նոյեմբերի 13-ից 28-ը, վեգետացիոն շրջանը 181—219 օր:

Շափրան կիտայկա սորտն իր բերքատվությամբ, վաղ պտղաբերությամբ, ցրտագիմացիկունությամբ և պտուղների համբ ու ապրանքային լավ հատկություններով լեռնային շրջանների առողջապահում մեջ պետք է գրավի առաջին տեղերից մեկը:

### Պ Ե Պ Ի Ն Շ Ա Յ Բ Ա Ն

Հենակետում փորձարկվում է 1934 թից: Տնկված են 2 տարեկան անկիների Ծառն իննը տարեկան հասակում 2—2<sup>1/2</sup> մետր բարձրության, ըստ հարիսուսի կիսապաճաճային է:

Բունը մեկ մետր բարձրություն ունի և 7 սմ. հաստություն: Կեղեն առողջ է և կանաչավուն-գորշ գույնի:

Սաղարթը կլորավուն է, խիտ: Հիմնական ճյուղերը՝ հինգ հաւան: Պաղային կազմափորումները գտնվում են 2, 3, 4 տարեկան բնափայտի վրա:


Միամյա շվերը խիստ թափու, կարճ միջահանգույցներ ունեն և մուգ-գարշնագույն են:

Ուսույակները սաղը են, նոսր, կտրավուն: Բոլղոջները շվից հեռու, խոշոր, կոնաձև, խիստ թափու են: Միջակ մեծության տերեր 8,5×5,8 սմ. է, ձվաձեւ, նուրբ մաշկանման, անողորկ, մանր սղոցաձև եղբերով, խիստ թափու: Ներփացիան խիտ է ու հավասարաչափ: Երեսի կողմի գույնը մուգ-կանաչ, տակի կողմինը՝ մովկանաչ: Տերեկարթը 3,7 սմ. երկարություն ունի: Տերեկիցները փոքր են ու

Նշտարաձեւ: Ծաղկափթթությունը՝ 2—6 ծաղկից: Միջակ մեծության  
ծաղիկը նման է ողևանյան մենեսի ծաղկին: Ծաղկակոթը երկար է  
ու խիստ թափու: Պատկաթերթիկները միջակ մեծություն ունեն,  
ձվաձեւ են և թեթևակի ատամնավոր: Կոկոնի գույնը մուգ-վարդո-  
գույն է, ծաղկելուց հետո բաց-վարդագույն: Բաժակը փոքր է և խիստ  
թափու: Բաժակաթերթիկները մանր ու կոնաձեւ են: Սպիներն առելք-  
ներից վեր են: Վարսանդները հիմքի մոտ միաձուլված են: Առելք-  
ների թիվը՝ 16—18:

Շաբրան Պեպինի ծաղիկների տարբերիչ հատկանիշն այն է, որ  
վարսանդները զեռ կոկոնի ստաղիայում գուրս են գալիս, բայց բնորմ-  
նավորում տեղի չի ունենում, ոչովհետև ֆիզիոլոգիակն զեռ հաստան  
չեն:

Պտուղների նկարագրությունն ու գնահատականը.—Պեպին Շաբ-  
րանը պաղարեցրության շրջանում (1936-ից մինչև 1941 թիվը) տար-  
բեր ձեռի ու մեծության պառողներ է տվել:




Նկ. 3. «Պեպին Շաբրան» տերեր և պտղի  
կտրվածքը. գծ. Ս. Ազուլյանի

Պաղարեցրության առաջին տարին պտուղները մանր էին ու կը-  
լու և միայն 1940 ու 1941 թվերի պտուղներն ունեին միատեսակ և  
տվյալ սորտի համար տիպական եղող հատած կոնանման ձև: 1940 թ.  
պտուղների քաշը հասավ 86 գրամի, բարձրությունը՝ 55 մմ., լայ-

Դասթիարակ 46 մմ., 1941 թ. բերքի պատուղների միջին քաշը հասավ  
110 գրամի:

Շափրան Պետինի պատուղները հասած-կոնաձև են: Պաղակոթը  
չոք ամ. երկարություն, 2 մմ. հասածություն ունի և դարչնազույն է:  
Վեցին փոսիկը խորն է, լայն, հարթ: Պաղի գույնը դեղնա-նարնջա-  
գույնը: Ցածի փոսիկը խոր, նեղ, մի քիչ կնճռուս:



Նկ. 4. «Շափրան Պետինի» պատուղներ

Բաժակը փոքր է: Մաշկը հաստ: Պաղի ծաղկող գույնը վառ-  
կաբմինային է, որ ծածկում է պաղի համարյա ամբողջ մակերեսը:  
Միջաւագը երկարավուն շաղցամաձև է: Կամերաները կլսաբաց են:  
Սերմը՝ երկարավուն-ձվաձև, սուր ծայրով: Մասնյութը պինդ, գեղին,  
մանրահատիկ, հյութեղ ռենետա-դինեթթվաշ համով:

Բիոլոգիական բնութագիր.—Փորձարկման շրջանում Շափրան Պե-  
տինի ծառերը զարգացել են լավ, տալով ամենամյա նորմալ աճում:  
Ցածը ջերմաստիճանից ոչ մի վնասվածք չի նկատված: Շափրան Պե-  
տինի պաղաբերությունն սկսվել է 1936 թվից, անկելու երկրորդ  
առարվանից: Պաղաբերության առաջին տարին ամեն մի ծառ միջին  
հաշվագ տվել է մեկ պատուզ, երբորդ տարին երեք պատուզ, չորրորդ  
տարին՝ 17 պատուզ: Առանձին ծառեր տվել են մինչև 47 պատուզ: Պըտ-  
դաբերաթյան 5-րդ տարին ամեն մի ծառին ընկել է միջին հաշվով  
237 պատուզ՝ 26 կիլո:

Պաղաթափառթյունը շատ սակավ է: Անյակային պայմաններում  
պատուղները դիմանում են 2—3 ամիս:


Օգտակար բեղմնավորման տոկոսը բնական փոշուման դեպքում՝  
16 է, Մ. Համբարձումյանի փորձերի տվյալներով՝ Շաֆրան Պեղինի  
լավագույն բեղմնավորողը Շաֆրան կիտայկան է, որ 18,4 % օգտա-  
կար բեղմնավորման է տալիս:

Սորտի փենոլզիան 1936-ից մինչև 1941 թիվը.—Դեղնաշիայի-  
սկիզբն սպրիփի 10-ից մինչև մայիսի 2-ը, Ծաղկման սկիզբը՝ մայի-  
սի 5-ից 20-ը, Պաղաճավաքի սկիզբը սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմ-  
բերի 7-ը, Շվերի աճման վերջը՝ հուլիսի 7-ից մինչև օգոստոսի 7-ը:  
Մասայական տերևաթափի վերջը՝ նոյեմբերի 8-ից 28-ը, վեցետա-  
ցիոն շրջանը՝ 182—219 օր:

Շաֆրան Պեղին սորտն իր պառուղների համբ և ապրանքային  
հատկություններով, բերքատվությամբ, ցրտագիմացկությամբ ու  
վաղ պաղաքերությամբ լեռնային զոնայի ասորտիմենտում պետք է  
զրավի առաջին տեղերից մեկը:

### ԲԵԼՅՈՐ ԿԵՏՈՆ

Հենակետում փորձարկվում է 1934 թվից: Տնկված էն 2 տարե-  
կան տնկիներ:



Նկ. 5. «ԲԵԼՅՈՐ» կիտայկան-ի տերևը և պաղի  
կտրվածքը. գծ. Ա. Ազուլյանի

Ծառը 9 տարեկան հասակում հասնում է 3—3 $\frac{1}{2}$  մետր բարձ-  
րության, Բունը 65 սմ, բարձրությունը ունի, 8,5 սմ. հաստությունը  
կեղեւը հարթ է, առաղջ, զեղնագորշ դռւյնի:


Սաղարթը կլորավուն, խիտ չիմնական ճյուղերի թիվը 7—8, հիմնական ճյուղերի տրամադիմը 4—4,5 մմ.: Պողային կազմավորումները 2, 3, 4, տարեկան բնափայտի վրա են:

Միամյա շվերը ծնկավոր են, թափոտ, բաց-դարչնազույն, միջահանգույցների երկարությունը 3—3,5 մմ.: Ոսպնյակները կլորավուն, միջակ մեծությամբ, խիտ-խիտ գասավորված: Կոկոններն ուռուցիկ, կլոր-կոնաձև, միջակ մեծությամբ, թիթեակի թափոտ:

Տերեր խոշոր է՝  $8,5 \times 10,5$  մմ., կլորավուն-ձվաձև, հաստ. հատվածները համաչափ են, վերևում սղմված, եղբերը խոշոր-սղոցաձև: Տերեի մակերեսն անողորկ է, անփայլ ներվացիան խիտ, գրեթե հագասարաչափ, երեսի կողմը մովկանաչ, տակի կողմը՝ բաց-կանաչ, թափոտ: Կոթունը միջակ մեծության՝ 3 մմ., թափոտ է: Տերեակիցները մանր, նշտարաձև են:

Մաղկափթությունը 4—6 ծաղիկ է: Մաղկը խոշոր, բաժակառձև: Պսակաթերթիկները կլորավուն: Մաղկակոթը երկար, կանաչ, խիտ թափոտ: Բաժակը խոշոր, խիտ թափոտ: Բաժակատերեսկիկները խոշոր, կոնաձև, Պսակաթերթիկները կլորավուն, գլանանման, խոշոր: Կոկոնի ժամանակ վարդագույն, ծաղկելուց հետո սպիտակի:

Սպիտակ գտնվում են առեջքներից վեր: Առեջքների թիվը—20: Պտուղների նկարազրաւթյանը ու զնահատականը.—Պաղի քաշը 160 գր., բարձրությունը 63 մմ., լայնությունը 72 մմ.: Պտուղը կլորձվաձև թույլ արտահայտված շերտավորությամբ: Պողակոթը միջակ՝



Նկա 6. «Բէլֆուր Ելիտայկայի» պտուղներ

2,7 մմ. × 3 մմ.: Վերին փոսիկը խոր, լայն Ներքեւի փոսիկը խոր, կընառուտ, բաժակը՝ փոքր, փակ, մաշկը՝ հասած, յուղուտ: Քաղելու ժամանակ պատուի դեղնա-հարդագույշն է, թույլ վարդագույշն շարիխներով: Պահած վիճակում ավելի վառ գույշն է ստանում:

Ենթաբաժակային խողովակը երկար է, կոնաձև: Միջուկը կենտրոնական է: Կամերաները բաց են: Սերմերը՝ խոշոր, կլորավուն, բացդարչնագույշն:

Պաղամիսը սպիտակ է, հյութեղ, քնքուշ, գինեթթվաշ-հաճելի համով, ախորժելի բույրով:

Բիոլոգիական բնօւրագիր.—Բելֆլոր կիտայկայի ծառերը փորձարկման շրջանում ցածր ջերմաստիճանից չեն վնասվել: Աճումը նորմալ է: Քամու ազդեցությունից սաղարթները մի քիչ թեքված են դեպի հարավ:

Բելֆլոր կիտայկայի պտղաբերությունն սկսվել է 1937 թվից՝ 6-րդ տարում: Պտղաբերության առաջին տարին ամեն մի ծառ միշտին հաշվով տվել է 4 պտուղ: 1938 թվին՝ 2 պտուղ, 1939 թվին՝ 4, 1940 թվին՝ 26, 1941 թվին՝ 15 պտուղ: Պտղաթափությունը թույլ է: Սենյակային պայմաններում պատուղն ապրում է մինչև 2 ամիս:

Օգտակար բեղմնավորման տակոսը՝ բնական փոշոտման դեպքում՝ 3 է, Մ. Համբարձումյանի փորձերի տվյալներով այս սորտի լավագույն բեղմնավորողը Լիմոնային Ռենեան է, որը տալիս է 60% օգտակար սաղմնավորում: Հունիս ամսին նկատվել է երկրորդ ծաղկում:

Սորտի փենոլոգիան 1937—1941 թ. թ. ընթացքում: Վեգետացիայի 1937—1941 թ. թ. ընթացքում: Վեգետացիայի ակիզը՝ ապրելի 13-ից 30-ը, ծաղկման սկիզբը՝ մայիսի 9-ից 19-ը, պտղահավաքի սկիզբը՝ սեպտեմբերի 10-ից 25-ը, աճման վերջը՝ հուլիսի 8-ից 26-ը, մասսայական տերևաթափը՝ նոյեմբերի 13-ից 28-ը, վեգետացիոն շրջանը՝ 174—197 օր:

Բելֆլոր կիտայկա սորտն իր ցրտազիմացկունությամբ, լավ համով և խոշոր պտուղներով պետք է հայաստանի լեռնային զոնայի ասորտիմենտում զբավի առաջին տեղերից մնի: Սորտի բացասական կողմը թույլ բերքատավությունն է, որն ըստ երկույթին կարելի է վերացնել համապատասխան փոշությունով:

#### ԿԱՆԴԻԼ ԿԻՏԱԿԱՐ


Հենակետում փորձարկվում է 1936 թվից: Տնկված են միամյա տնկիներ, որոնք 5 տարեկան հասակում հասան 1,8 մետր բարձրության:

Բնի բարձրությունը 65 սմ. է, հաստությունը 6 սմ: Կեղելը հարթէ է, առողջ: Սաղարթը բրգածէ, խիտ, 9 հիմնական ճյուղերով, որոնց

տրամագիծը հասնում է 3—4 սմ. մի Ասպնյակները բաղմամյա բնափայտի վրա խոշոր են, կլոր-երկարաձև:

Պտղաբերությունը լինում է 2, 3, 4 տարեկանի վրա: 2, 3, 4, 5, տարեկան ծառի կեղևի գույշնը կանչավուն-դեղին է:

Միամյա շվերը մուգ-կարմիք են, ուղիղ, 2—2,5 սմ. միջահանագույցներով:



Նկ. 7. «Կանգի նիտայկա» բնական մեծությամբ.  
գ. Ագույցանի

Ասպնյակները սակագլ են, միջակ մեծության, կոնաձև, թափու:

Միջակ մեծության տերերը 7,8×4,7 սմ. է՝ երկարավոշ-ձվաձև: Եզրերը՝ երկակի ատամնավոր, վերին մակերեսի գույշնը մուգ-կանաչ, ստորին մակերեսինը՝ մուգ-կանաչ: Ներվացիան խիտ է, տակի կողմը խիստ թափու: Տերեկակիցները կարճ են, նշտարաձև:

Ծաղկի կոկոնները մանր են, կոնաձև, թեթևվակի թափու: Ծաղկաթիթությունը՝ 5 ծաղկանի: Միջակ մեծության ծաղկակրթի երկարությունը՝ 2,2 սմ., լայնությունը 1 մմ., խիստ թափու: Բաժակը միջակ մեծության, թեթևակի թափու: Պսակաթերթիկները խաչոր են՝ հակագղիք ձվաձև, քիչ կնճոռու, կոկոնում մուգ-վարդագույշ, ծաղկելուց հետո վարդագույշ: Սպիններն առեջքների մակարդակին են, հիմքի մոտ միաձուլված: Առեջքների թիվը հասնում է 18-ի:

Պտղի նկարագրությունն ու գնահատականը.—Պտղի քաշը հասունում է 106 գր.-ի, բարձրությունը՝ 66 մմ., լայնությունը՝ 54 մմ.: Պտղի ձեր կլոր-կոնաձև կամ բռւթ-կոնաձև է: Պտղակոթը երկար է՝ 3,5 մմ., լայնքը՝ 1,5 մմ., դեղնավուն-կանաչը՝ Ստորին փոսիկը խոր, լայն, ազդանեաձև, ծալքավոր, կանաչավուն, սպիտակ՝ հնդիմացակյա խիստ կա-տերով: Վերին փոսիկը խոր, լայն, հարթ, կանաչավուն, ծածկված ներքնամաշկյա փոքրաթիվ կետերով:

Բաժակը խոշոր է, ամփոփ, խոշոր բաժակատերեկիներով: Մաշկը նորրը է, հարթ, փայլուն: Հիմնական գույնը պտղահավաքի ժամանակ գեղին է՝ բաց-նարնջագույն թշիկներով: Միջուկը խոշոր է, համարյա կենարոնական: Սերմի կամերաները փոքր են, փակ: Ենթաբաժակային խողովակը փոքր է և վերնամասում ունի առեջքների հետքեր: Պտղամիան սպիտակ է, մանրահատիկ, հյութեղ, զինեթթվաշ-թթվության ու շաքարի խիստ հաճելի համագրությամբ: Իր համով շատ ավելի ախորժելի է կանդիլ Մինաղից:

Բիբլոցիական բնուրագիր:—Փորձարկման շրջանում կանգիլ կիտայկա սորտն ամենակիին չի փասկել ցածր ջերմաստիճանից, ոչ էլ կիղիչ արեից: Աճում է նորմալ կերպով:

Պտղաբերությունն սկսվել է 1939 թվին, 6-րդ տարուց: Պտղաբերության առաջին տարին ամեն մի ծառ միջին հաշվով տվել է 2 պտուղ, երկրորդ տարին՝ 35 պտուղ:

Սարտի փենուոգիան 1938-ից մինչև 1941 թ. թ.—Վեղեսացիայի սկիզբը նշվել է ապրիլ 2-ից 30-ը, ծաղկման սկիզբը՝ մայիսի 8-ից 19-ը, աճման վերջը՝ հունիսի 11-ից 26-ը, պտուղների հասնելու սկիզբը՝ սեպտեմբերի 6-ը, մասսայական տերևաթափը՝ հոյեմբերի 8-ից 13-ը. վեցետացիոն շրջանի տեսողությունը՝ 186—212 օր:

Կանդիլ կիտայկա սորտը պտուղների համեմ հիանալի հատկություններով, դիմացկունությամբ՝ Հայաստանի լեռնային շրջանների ասորտիմենտում պետք է գրավի առաջնակարդ տեղ:

### Ա 1. Ա. Վ. Յ Ա. Ն Կ Ա.

Հենակետում փորձարկվում է 1935 թվից. անկված են երկու տարեկան անկիներ:

Սլավյանկայի ծառն ինը տարեկան հասակում հասնում է 3,25 մ. բարձրության Սաղարթը բրդաձև է, նոսր, հիմնական ճյուղերի թիվը՝ 5: Բունը հասնում է 60—70 սմ. բարձրության: Կեղես կանաչավուն-դեղին, հարթ, անփայլ:

Պտղաբերությունը տեղի է ունենում 2, 3, 4 տարեկան ճյուղերի վրա: Բազմամյա ծառի ոսպնյակները խոշոր են, երկարավուն: Երրորդ կարգի ճյուղերի արձակման անկյունը սուր է:

Միամյա շվերն ուղիղ են, դարձնագույն, խիստ թափոտ, միջանակույցների երկարությունը՝ 2,5—3 սմ., Ոսպնյակները նոսր են, մանր, կլոր: Աճման բողոքոջները սեղմված են, մանր, կոնաձև և խիստ թափոտ:


Միջակ մեծության տերեր 8×6,5 սմ, կլորավուն՝ սուր ծայրով, քիչ զորագոր, մանր ատամավոր: Վերին մակերեսը կանաչ է, ներքեինը՝ մոլուսաչ: Տերևաթիթեղի մակերեսն անողորկ է, թափոտ: Ներվացիան նոսր է, կոթունի երկարությունը՝ 2,1 սմ., լայնությունը՝ 2 սմ.: Տերևակիցները մանր՝ 0,5 սմ, երկարությամբ, նշտարաձև:

Ծաղկի կոկոնները կոնաձև, միջակ մեծության, խիստ թափոտ: Ծաղկափթթությունը 4—5 ծաղկից:

Ծաղկի միջակ մեծություն ունի, հարթ է ու սպիտակ: Ծաղկակոթը միջակ երկարություն ունի, կանաչ է ու խիստ թափոտ: Բաժակը՝ միջակ մեծության, թիթևակի թափոտ է: Բաժակատերեկիկները՝ միջակ մեծության, սեղածե են:

Պատկաթերթիկները միջակ մեծության, կլոր, հարթ, հավասարեղբար: Կոկոնի ժամանակ պսակաթերթիկները մուգ-վարդագույն են, ծառչկեղուց հետո՝ բաց-վարդագույն: Վարսանդն լառելքներից վեր է, հիմքի մոտ միաձույլ: Առելքների թիվը՝ 18:

Պտուղների նկարագրույթունն ու գնահատականը.—Պտղի միջին




Նկ. 8. «Սլավյանկայի» պտուղներ

քաշը 110 գր., բարձրությունը՝ 52 մմ., լայնությունը՝ 62 մմ.: Պտուղների ձևը՝ հարթ-կլորավուն: Պտղակոթը խիստ կարճ է ու կանաչ:

Ստորին փոսիկը խորն է, նեղ, հարթ: Վերին փոսիկը ոչ խոր, թիթևակի կոնձռոտ: Բաժակը՝ ամփոփ, բաժակատերեկիկները հիմքի

մոտ միաձույլ են: Սլավյանկայի պտղի համար բնորոշ է ուռուցիկ զիծը, որ պաղակոթի հիմքից ձգվում է մինչև բաժակը:

Պտղահավաքի ժամանակ՝ պտղի զույնը կանաչ է, արևակողմում կա թեթև նարնջագույն երանգ: Մաշկը հաստ է, հարթ, փայլուն և թամաշաշկյա սպիտակ, խիտ կետերով: Միջուկը լայն շաղկամածե զետեղված է ավելի ցած: Սերմի կամերաները փոքր, փակ, անկյունավոր, ենթաբաժակային խողովակը փոքր՝ վերնամասում առեջքների մնացորդներով:



Նկ. 9. «Սլավյանկայի» տերեր և պտղի կտրվածքը  
ընական մեծությամբ. դժ. Ա. Ազուլյանի

Սերմերը միջակ մեծության, կլոր կտուցով, դարչնագույն:  
Ամեն մի կամերայի մեջ 2 սերմ է լինում:

Պտղամիսն սպիտակ է, մանրահատիկ, հյութեղ, գինեթթվաշ, հաճելի համով:

Բիոլոգիկան բնուրագիր.—Փորձարկման շրջանում Սլավյանկայի ծառերը զարդացնել են նորմալ կերպով, մասնաւոր հետքեր չեն ունեցել: Մայիս 1941 թ. նկատվեցին վեգետատիվ բողոքների մասնակի միամյա շվերի միջին մասում:

Սլավյանկայի պտղաբերությունն սկսվել է 1937 թվին՝ հինգերորդ տարում: Պտղաբերության առաջին տարում ամեն մի ծառ միջին հաշվով տվել է 4 պտուղ, 1938 թվին՝ 4 պտուղ, 1939 թվին՝ 20 պտուղ, 1940 թվին՝ 46 պտուղ, 1941 թվին՝ մինչև 73 պտուղ:

Պտղաբերության ծառի վրա մոտև են մինչև սեպտեմբերի վերջը, համարյա առանց թափվածք տարու Սենյակային պայմաններում դիմանում են 15—20 օր: Պտղաբերության առաջին տարին Սլավյանկայի պտուղները հասունանում են ծառի վրա:

Հ 18789  
4830

Սորտի Փենոլոգիան 1938-ից 1941 թ. թ.—վեղետացիայի սկիզբը՝ ապրիլի 10-ից 29-ը, ծաղկման սկիզբը՝ մայիսի 6-ից 20-ը, պտուղների հասնելու սկիզբը՝ օգոստոսի 29-ից սեպտեմբերի 6-ը, աճման վերջը՝ հուլիսի 1-ից 25-ը, մասսայական տերևաթափի վերջը՝ հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը, վեղետացիան շրջանի տևողությունը՝ 171—218 օր:

Սլավյանկա սորտն արժեքավոր լինելով իր բերքատվությամբ և վաղ սղողաբերությամբ՝ պետք է տեղ գրավի Հայաստանի լեռնային գոնայի ասորտիմենտում:

### ՏՐՈՒՎՈՐ

Հենակետում փորձարկվում է 1937 թվից. տնկված են երկու տարեկան տնկիներ: Տրուվորի ծառը 8 տարեկան հասակում հասնում է 2 մետր բարձրության: Սաղարթը խիտ չէ, բրդաձեւկորացվում է: Երրորդ կարգի ճյուղերի արձակման անկյունը սուր է: Կեղեց՝ անողորկ, խորդուրորդ:

Շվերն ուղիղ են, մուգ-դարչնագույն, միջնանգույցները՝ 3 սմ., թույլ-թափուտ նապնյակները նոսր են, մանր, կլորավուն:


Միջակ մեծության տերեւ 10,6×5 սմ., ձվաձև, քիչ զոգավոր, մանր սղոցանման եղբերով: Տերեւ մակերևու փայլուն է, թեթևակի մազուտ: Ներփացիան նոսր է: Տերեւակիցները մանր, նշտարաձև:

Պտղի նկարագրաւրյունն ու զնահատականը.—Պտուղը կլոր է



Նկ. 10. «Տրուվորի» պտուղներ

կողեր ունի. քաշը 140 գրամ է, բարձրությունը 55 մմ., լայնությունը 44 մմ.: Վերին փոսիկը խորն է, լայն, թեթևակի կնճռոտ: Բաժակը փոքր, ամփոփու Ստորին փոսիկը խորն է, լայն, թեթևակի կընձռոտ, ծածկված է մոզ երանգով: Պաղակոթը կարճ է: Պաղի մակերեսը փայլուն է, հարթ, ենթամաշկային խիտ կետերով: Գույշը դեղնա-կանաչ՝ կարմիր-վարդագույշն երանգով, որի վրա սփոված են կարմինագույշն շտրիխներ:



Նկ. 11. «Տրուվորի» տերեր և պաղի կորպամբը  
ընական մեծությամբ. դժ. Ա. Ագույանի

Միջուկը կենտրոնական, շաղկամածն, կամերաները կիսաբաց Պաղամիսը դեղնագույն, փխրուն, մեծահատիկ, անհյութ (ցամաք), քաղցր:

Տրուվորի պաղամբերությունն սկավել է 1939 թվին: Առաջին տարին ամեն մի ծառ միջին հաշվով տվել է 14 պտուղ, առանձին ծառեր մինչև 22 պտուղ: 1940 թ. ամեն մի ծառ միջին հաշվով տվել է 49 պտուղ: Ծառն աճում է ուժեղ, զատկածքներ չունի:

Սորտի փենոլիֆան 1938—1941 թ. թ.—Վեգետացիայի սկիզբը՝ ապրիլի 14-ից մայիսի 2-ը, ծաղկման սկիզբը՝ մայիսի 6-ից 15-ը, պտղահավաքի սկիզբը՝ օգոստոսի 26-ից սեպտեմբերի 26-ը, աճման վերջը՝ հուլիսի 7-ից 21-ը, մասսայական տերեսաթափի վերջը՝ հոկտեմբերի 20-ից 26-ը, վեգետացիոն շրջանի անդությունը 181—202 օր:

### Զ Մ Ե Ռ Ա Յ Ի Ն Ա Ր Կ Ա Դ

Հենակետում փորձարկվում է 1934 թ.: Զմեռային Արկադի ծառը 9-ամյա հասակում հասնում է 4,5 մետր բարձրության: Բունը 50—60 սմ. բարձրություն ունի, 10 սմ. լայնություն: Կեղեց հարթ է, առողջ:

Սաղարթը բրդաձե, խիստ՝ 3 մետր տրամազծովլ։ Հիմնական ճյուղ  
զերի թիվը 4 է՝ 4—6 սմ. տրամազծովլ։ Կեղեց փայլուն է, բաց-  
օքրայագույն, ծածկված զորշ երանգով։

Միամյա շմբերն ուղիղ են՝ մուզ կարմիր, միջնանգույները  
3 սմ.։ Ասպնյակները միջակ մեծության են, ձվաձե, փոքրաթիվ։ Աճ-  
ման բողբոջները սեղմված, մասնը, բթածայր։

Միջակ մեծության տերելը՝ 9,4×6,5 սմ., ձվաձե, վերնամասում  
գողավոր, եղբերը սղոցած։ Տերեի երեսի կողմի գույնը մուզ-կանաչ,  
փայլուն, ներվերի շուրջն ընդերկարությամբ թափուտ ներփացիան  
նուր է։ Տերեակիցները նեղ՝ 0, 5 սմ. երկարությամբ։

Ծաղկափթթությունը 2—6 ծաղկից։ Ծաղկիը միջակ մեծություն  
ունի։ Ծաղկակոթը 2,8 սմ. երկարություն և մուզ-կանաչ գույն  
ունի, թափուտ է։ Բաժակը փոքր է՝ աղվամազով խիստ պատված։ Բա-  
ժակատերեիկները մանր, նշտարաձե, վերնամասում գողավոր։ Պա-  
կաթերթիկները խոշոր, ձվաձե, կոկոնի ժամանակ մուզ-վարդազույն,  
ծաղկելուց հետո վարդազույն։ Առեջքներն սպինկը մակարդակին են։  
Առեջքների թիվը՝ 18։

Պտուղների նկարագրությունն ու գնահատականը. — Պտուղը կորա-




Նկ. 12. «Զմեռային Արկադ» պատղներ

վուն է, քաշը 140 գրամ, բարձրությունը 67 մմ., լայնությունը 67 մմ.,  
Պտղակոթը կարմ է, հաստացած հիմքով, բաց կանաչ։ Ստորին փոսիկը  
խոր, լայն՝ չորս հատ, մսուտ, թույլ արտահայտված ելուստներով։  
Ներին փոսիկը խորը չէ, լայն է և ծալքավոր մակերես ունի։

Բաժակը փոքր է, կիսաբաց, բաժակատերեկիները մանր են, կունաձև, հիմքում միաձռյլ, կանաչ:

Մաշկը նուրբ է, յուղում՝ մեղքի հոտով: Պտուղը կրեմա-սոկեղույն է՝ կարմ, փոքրաթիվ, թույլ վարդագույն շարիխներով:

Միջուկը կենտրոնական է, կամերաները փոքր, փակ: Պտղի միւը փխրուն, մեծահատիկ, համը քաղցր, թեթև թթվաշությամբ:



Նկ. 13. «Զմեռային Արկադի» տերեր և պտղի կտրվածքը  
բնական մեծությամբ. դժ. Ռ. Աղույանի

Ըստ քիմիական կազմի՝ Զմեռային Արկադի պտուղը պարունակում է՝ ընդհանուր շաքար  $11,63\%$ , ինվերտ շաքար  $6,15\%$ , սախարոզներ  $5,2\%$ , թաղանթանյութը՝  $6,93\%$ , թթուներ  $0,37\%$ , մոխիր  $0,27\%$ , չոր նյութեր  $15,5\%$ :

Բնույթիական բնուրագիր.—Զմեռային Արկադի ծառերը լավ են աճում, չեն վնասվում ցած ջերմաստիճանից:

Պտղաբերությունն սկսվել է 1936 թվից, չորս տարեկանից (տընկելու երկրորդ տարվանից), Պտղաբերության տուածին տարում ամեն մի ծառ միջին հաշվով տվել է 3 պտուղ, 1937 թ. 6 պտուղ, 1938 թ. 7 պտուղ, 1939 թ. 44 պտուղ, որոշ ծառերի բերքը հասավ 62 պտղի:

1941 թվին ամեն մի ծառին ընկնում էր միջին հաշվով 158 պտուղ, առանձին ծառեր տվել էն մինչև 246 պտուղ, որը կշռում էր 33,7 կիլո: Պտղուղները ծառի վրա հասունանում են:

Պտղաբերության առաջին տարին թափուկի տոկոսը մեծ

էր, հաջորդ տարիներին տոկոսը պակասեց: Պառւղներին վլասում է թրթուրը: Օգտակար բեղմնավորման տոկոսը բնական փոշոտման դեպքում՝ հասնում է 7,3-% (1937 թ.) և 1941 թվին՝ 1,5-%: Հստ Մ. Համբարձումյանի փորձերի տվյալների՝ Զմեռային Արկադի լավագույն փոշոտիչը Լիմոնային Ռենեատն է, որը տվել է 13,1% օգտակար բեղմնավորում (1941 թ.), Նկատվել է Զմեռային Արկադի երկրորդ ծաղկում հունիս ամսին՝ ընթացիկ տարվա շվերի վրա: Զմեռային Արկադի պատուղները սենյակային պայմաններում դիմանում են 10—15 օր:

Սորտի Փենուոզիան 1938—1941 թ. թվակետացիայի սկիզբը՝ մարտի 27-ից ապրիլի 28-ը, ծաղկման սկիզբը՝ մայիսի 6-ից 19-ը, պատղաճավաքի սկիզբն օգոստոսի 15—20-ը, աճման վերջը՝ հունիսի 7-ից 26-ը, վեգետացիոն 2րջանը՝ 178—189 օր:

Զմեռային Արկադն առատարերք, վաղ ժամանակում պառող ցրտադիմացկուն է, նա պետք է մտնի Հայաստանի լեռնային զոնայի ասորտիմենտի մեջ որպես երկրորդ կարգի խնձորենի:

#### Կ Ա Ր Մ Ի Բ Շ Տ Ա Ն Դ Ա Ր Տ

Հենակետում փորձարկվում է 1934 թվից: Տնկված են Երկու տարեկան տնկիներ: Կարմիր Շատանդարտի ծառերն ինը տարեկան հասակում 2 մետր բարձրություն ունեն: Սաղարթի ձևը կլորավուն է, չափազանց խիտ: Երրորդ կարգի ճյուղերի արձակման անկյունն ուղղի է:

Բունը 60 սմ. է, հաստությունը 8 սմ. կենքը կարմիր, հարթ: Հիմնական 7 ճյուղ կա, որոնց տրամագիծը 3—4 սմ. է:

Բազմամյա բնափայտի վրա սաղնյակները խիտ չեն դասավորված: Պաղաքերությունը լինում է մեկ-երկու տարեկան բնափայտի վրա:


Միամյա շվերը մուգ-կարմիր են, խիստ թափու են և ունեն կարճ միջահանգույցներ: Ուսպնյակները միջակ են, երկարավուն, խիտ դասավորված: Վեգետատիվ բողոքները հետ ծոված են, միջակ մեծություն ունեն, կարափուն-կոնաձև են և խիստ թափու: Միջակ մեծության տերերը 8,4×5,4 սմ. է, ձվաձև, թեթևակի գոգավոր, եղբերը մանը ատամնավոր: Տերեկի երեսի կողմը կարմրագուն-կանաչ է, հակադիր կողմը՝ մով: Տերեկի մակերեսը թեթևակի անողորկ, քիչ թափու, ներփացիան նորը է:

Մաղկափթթությունը՝ 5 ծաղկից: Մաղիկը միջակ մեծություն ունի, ծաղկակոթը միջակ երկարություն ունի, խիստ թափու է և կարմրագույն:

Բաժակը փոքր է, խիստ թափու, բաժակատերեկիները կոնաձև են և խիստ թափու: Պահկաթերթիկները կլորավուն ձևի են, հարթ,

միջակ մեծության, կողոնի մեջ մուգ-կարմիր, ծաղկելուց հետո՝ բաց-կարմիր:

Սպիտակը առևշբների մակարդակին են, վարսանդները հիմքում միաձուլված են:



Նկ. 14. «Կարմիր Շտանգաբարտի» տերնը և պտղի կորզածքը.  
Բնական մեծությամբ բ. զ. մ. Ագուլյանի

Պտուղների նկարագրությունն ու գնահատականը.—Բաշը 45 զը-  
րամ, բարձրությունը 37 մմ., լայնությունը 49 մմ., համարյա կլոր  
ձև ունի: Պտղակոթք երկար է՝ 24 մմ., նեղ՝ 1,5 մմ.: Ստորին փոսիկը  
խոր, ժանգապատ: Վերին փոսիկը խոր չէ, ելեկէջներ ունի: Պտուղը  
մուգ-կարմիր է՝ մանիչակագույն երանգով: Բաժակը փոքր է, կիսա-  
բաց: Միջուկը փոքր է, սերքնազիբ:

Պտղամիսը վարդագույն է, անմիջականորեն պտղամաշկի տակ  
և սերմնաբանի մոտ եղած մասերը կարմրագույն են, փխրուն է ու  
հյութեղ, խիստ թթու:

Այս խնձորից պատրաստված ժելեն ստացել է գնահատական՝ 4:

Բիոլոգիական բնուրագիր.—Կարմիր Շտանգաբարտի ծառերը զար-  
գանում են շատ լավ, ոչ մի վնասվածք չունեն: Ակսել են պտուղ տար  
1937 թվից՝ 7 տարեկանից: Առաջին տարին մի ծառը միջին հաշվով  
տվել է 12 պտուղ, 1940 թվին՝ 2—3 կիլո, 1941 թվին՝ 5—6 կիլո:

Սորտի փենուզիան 1936—1941 թ. ք.—Վեցետացիայի սկիզբը՝  
տարիմի 5-ից 28-ը, ծաղկման սկիզբը՝ մայիսի 6-ից 19-ը, պտղահա-  
վաքը՝ սկիզբը՝ օգոստոսի 15-ից սեպտեմբերի 7-ը, աճման վերջը՝ հու-

լիսի 8-ից 26-ը, մասսայական տերեաթափի վերջը՝ նոյեմբերի 2—19-ը:  
Վեգետացիոն շրջանի տևողությունը՝ 178—189 օր:

Տերքատու սորտ է և ցրտազիմացկուն: Արժեքավոր է տեխնո-  
լոգիական վերամշակման համար: Լեռնային զոնայի ասորտիմենտի  
մեջ կարող է գրավել երրորդ տեղը:

### Ե Զ Պ Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Էկորոդիական և ագրոտեխնիկական պայմանները կարևոր գոր-  
ծոններ են սորտերի նոր հատկություններ սրբան բերելու համար:

Միջուրինյան սորտերը լինելով երթասարդ, նորակաղմ ձևեր,  
ավելի տրամադիր են ընտելանալու իրենց համար նոր հանդիսացող  
լենինականի բարձրավանդակի էկորոդիական պայմաններին, ուստի  
թե մորֆոլոգիական և թե բիոլոգիական կարգի որոշ փոխություն-  
ներ են ցույց տալիս:

Միջուրինյակի և ՌՍՅՍՍ-ի կենարոնական մասի համեմատու-  
թյամբ լենինականում միջուրինյան սորտերը՝ ըստ մեր գիտողու-  
թյունների ունեն ավելի հասացած, թավոտ տերեաթիթեղներ:

Փոխվել են նաև որոշ սորտերի պաղաքարերության և պառազների  
հասունացման սկիզբները, օրինակ՝ Շաֆրան կիտայկան Միջուրինյակի  
պայմաններում պառուց է տալիս անկերուց հետո՝ 2-րդ, 3-րդ տարում,  
իսկ լենինականում 3-րդ, 4-րդ տարում: Զմենային Արկադը Միջու-  
րինյակում հասունանում է սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում՝ զի-  
մանալով մինչև փետրվարը: Լենինականում սկսում է հասունանալ  
սովորությունները տասնօրյակում և ժամանակին չքաղելու դեպքում  
պառազները ծառի վրա ջրականությունը առաջնային է: Հաքճքում, կորցնում իրենց  
ավրանքային հատկությունները, իսկ սենյակային պայմաններում զի-  
մանում են մինչև նոյեմբերի կեսը:

Տելֆլյոր կիտայկա սորտը Միջուրինյակում հասունանում է սեպ-  
տեմբերի 10—20-ին, իսկ լենինականում ծառի վրա դիմանում է  
մինչև սեպտեմբերի վերջը՝ չստանալով բնորոշ գույշներ: Ալավյանկան  
Միջուրինյակում հասունանում է սեպտեմբերի 15—25-ին, իսկ լենի-  
նականում՝ սեպտեմբերի վերջին, հոկտեմբերի սկզբին:

Մնացած սորտերի հասունացման ժամկետները դուռադիպում են:  
Թթվուրից փափառում է ամենից շատ Զմենային Արկադը, մյուս-  
ները չնչին չափով են փափառում:

Պտուզների քաշի մեջ էլ փոփոխություններ կան. օրինակ՝ Շաֆ-  
րան կիտայկան, Շաֆրան Պետինը, Ալավյանկան, Զմենային Արկադը  
լենինականում ավելի խոշոր պառազներ են տալիս, քան Միջուրին-  
յակում, իսկ Կարմիր Շտանդարտը, Բելֆլյոր կիտայկան, Կանդիլ կի-  
տայկան շատ ավելի փոքր, քան Միջուրինյակում:

Ցրտին գիմանալու և կեղեի արեահարությանը գիմանալու տեսակետից խնձորենու վերոհիշյալ միջուրինյան սորտերն արժեքավոր հատկություններ հանդես բերին:

№ № ըստ կարգի	Սորտի անունը	Պաղի միջին քաշը նականում, մինչև ծառի 10 տարեկան դառնալը	Պաղի միջին քաշը Մինու- րինսկում, մինչև ծառի 15 տարեկան դառնալը
1.	Շաֆրան Կիտայկա	120 գրամ	94 գրամ
2.	Շաֆրան Պեպին	110 "	97 "
3.	Բելֆլյոր Կիտայկա	160 "	192 "
4.	Կանդիլ Կիտայկա	106 "	132 "
5.	Սրավյանկա	110 "	106 "
6.	Չեռապին Արկադ	140 "	82 "
7.	Կարմիր Շտանդարտ	45 "	65 "

1941—42 թվերի գտան ձմեռը՝ բոլոր պատզատու ծառերի համար խիստ քննություն եղավ: Մառերը թեակոխեցին ձմռան ըրջանը՝ բավականաչափ հնասունացած բնափայտով, որովհետև աշնանը՝ սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 3-ը ձյուն եկավ, ցրտահարված տերեւներն առանց գույնը փոխելու չորացան և ամրող ձմռան ընթացքում այդպես էլ մնացին ծառերի վրա: Ցրտահարությունից հետո որոշ ժամանակ նորից լավ եղանակ սկսվեց: Զմեռն իր իրավունքներն ստանձնեց նոյեմբերի կեսից ու տեսից մինչև հաջորդ տարվա ապրիլի կեսը: Նվազագույն չերմաստիճանը հասավ —35°-ի: Զնայած չափազանց աննպաստ պայմաններին՝ նկարագրված սորտերի ծառերը լավ զիմացան ձմռանը: Միայն կանգիլ կիտայկայի և Շաֆրան կիտայկայի ծաղկաբողոքները աննշան վնասվածքներ ունեցան: Դժբախտաբար հետազուտմ վաղ առավոտյան ցրտերը մայիսի 10—15-ին և հունիսի 10-ին փչացրին 1942 թվի բերքը:

Ինչպես կենինականի կլիմայական պայմաններում, այնպես էլ նոր-Բայազետի, Բասարգեչարի, Մարտունու լեռնային ըրջաններում՝ ♀, Կարանյանի հետազոտության նյութերով՝ միջուրինյան Զմեռային Արկադ, Շաֆրան Պեպին, Շաֆրան կիտայկա, 600 գրամանոց Անտոնովկա, Սրավյանկա խնձորենիները լավ են զարգանում տալով նորմալ անեցողություն:

Միջուրինյան խնձորենիների առաջին սեպտեմբերից ինի նականի հինակետում և կենինականի պատզատու անկարաններում՝ նոր-Բայազետում, Մարտունիում, Մեծ Ղարաբղլիսայում և Դուղքենդի ըրջանի վերին Ղալիջայում, լավ արգյունքներ են ավել:

Ծառերի 1941—1942 թ.թ.ձմեռելու հետեանքները ըրջաններում մենք դեռ չենք ստուգել: Բայ սկզբնական սորտափորձարկման-

և արտադրական տնկումների նախնական հետազոտության տվյալների՝ կարելի է գալ այն եղբակացության, որ վերոհիշյալ սորտերից Հավագույններն են՝ Շաֆրան կիտայկան, Պեղին Շաֆրան, Կանդիլ կիտայկան, Սլավյանկան, Բելֆլյոր կիտայկան։ Վերջինս թեև օգտակար բեղմնավորման ցածր տոկոս է տալիս, այնուամենայնիվ մենք մտցըել ենք առաջնակարգերի շարքերը՝ ելնելով նրա պառազների լով համբից և մեծությունից։

Երկրորդ կարգին են գասվում՝ Տրուկորը, Չմեռային Արկադը, երրորդ կարգին՝ Կարմիր Շտանդարտը։

Վերը բերված տվյալները, որ հետեւանք են միշուրինյան սորտերի վրա կատարված առաջին 3—4 տարիների դիտողությունների, անշուշտ կարող են միայն նախնական օրիենտիր նյութ համարվել։ Հենակետում շարունակվում են երկարատև դիտողություններ կատարվել փորձնական ծառերի վրա, որպեսզի Հայտատանի լեռնային պայմանների համար սորտերի վերջնական ընտրություն անելու հնարավորություն լինի։

---

Հավելված № 1

ՄԻԶՈՒՐԻՆՅԱՆ ԽՆՉՈՐԵՆԻՆԵՐԻ ՍՈՐՏԵՐԸ, ՆՐԱՆՑ ՏՆԿՄԱՆ ՏԱՐՄԹԻՆԸ,  
ԳՏԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԿԻՖԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հ Ա բառ կարգի	Սորտի անունը	Տնկման տարի	Տնկման պահին պարզաբնական պատճենների	Տնկման պահին պարզաբնական պատճենների	Տնկման պահին պարզաբնական պատճենների	Տնկման պահին պարզաբնական պատճենների	Տնկման պահին պարզաբնական պատճենների	Մեկ ժամի միջին բերքը (հատով) և պարզաբնական պարփեն
1.	Ջմեռային Արկադ	1934	Առողջ	է	ոչ	1936	1940 Բ.	65 գրանգ
2.	Գեղին Շաքրան	1934	շ	շ	շ	1936	1940 շ	70 շ
3.	Շաքրան Կիսայիկա	1934	շ	շ	շ	1938	1939 շ	43 շ
4.	Բելֆյոր Կիսայիկա	1934	շ	շ	շ	1937	1940 շ	14 շ
5.	Դեղին Անունովիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	2 շ
6.	Կանդիլ Կիսայիկա	1937	շ	շ	շ	1939	1940 շ	26 շ
7.	Բորսգոր Կիսայիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	9 շ
8.	Բելֆյոր Քույցը	1937	շ	շ	շ	1939	1939 շ	4 շ
9.	Բոյլակ	1937	շ	շ	շ	1939	1939 շ	8 շ
10.	Բենետ Բերգումանի	1937	շ	շ	շ	1939	1939 շ	5 շ
11.	Կարմէր Շտանդարտ	1937	շ	շ	շ	1939	1939 շ	12 շ
12.	Ալարդանիկա	1937	շ	շ	շ	1939	1940 շ	62 շ
13.	Կուրոն Կիսայիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	3 շ
14.	Տրումար	1937	շ	շ	շ	1939	1939 շ	19 շ
15.	Մայենական	1937	շ	շ	շ	1939	1939 շ	2 շ
16.	Գեղին Կիսայիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	4 շ
17.	Կարմիլ Անունովիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	3 շ
18.	Անկե-Կիսայիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	5 շ
19.	Շամաննեն Կիսայիկա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	1 շ
20.	Տայրայի	1937	շ	շ	շ	1939	1939 շ	16 շ
21.	Նոր Բորովիկնեա	1937	շ	շ	շ	1939	1939 շ	40 շ
22.	Դամանութեց	1937	շ	շ	շ	1939	1939 շ	3 շ
23.	Որդե-Կիսայիկա	1937	շ	շ	շ	—	—	—
24.	Միշուրինի-անսերմ	1937	շ	շ	շ	—	—	—
25.	Բելֆյոր Ռեկորդ	1934	շ	շ	շ	1940	1940 շ	5 շ
26.	Անտոնովիկա 600 գր-սց	1934	շ	շ	շ	1938	1938 շ	3 շ
27.	Զելերի Կիսայիկա	1939	շ	շ	շ	—	—	—
28.	Օլեկ	1939	շ	շ	շ	—	—	—
29.	Կողագար	1939	շ	շ	շ	—	—	—
30.	Ֆրամ	1939	ծ	ծ	ծ	—	—	—
31.	Ռենետ Հաքարահամ	1939	ծ	ծ	ծ	—	—	—
32.	Կիսայիկա անհոգվան	1939	ծ	ծ	ծ	—	—	—
33.	Կարմրագորչ	1939	ծ	ծ	ծ	—	—	—
34.	Գարազոր	1939	ծ	ծ	ծ	—	—	—
35.	Ռենետ Ռենունիկովի	1939	ծ	ծ	ծ	—	—	—
36.	Հակինթ (յախոտօն)	1939	ծ	ծ	ծ	—	—	—
37.	Միասագ Միշուրինի	1939	ծ	ծ	ծ	—	—	—

Lundberg No 2

1941 *Hippomelus* *leucurus* *luteus*

Մասսայական ծառիվճակներ	Մարդկանց ամերիկական օբյեկտներ		Պաղաճակալավահան հաստինական թափանց սկզբանութեալը		Պաղաճակալավահան հաստինական թափանց սկզբանութեալը		Մասսայական տերևաթափանց սկզբանութեալը		Մասսայական ամերիկական օբյեկտներ		
	1939	1940	1941	1939	1940	1941	1939	1940	1941	1939	1940
21.5	22.0	15.0	12	3	10	15.9	20.9	30.9	10.0	15.0	26.7
17.5	22.5	13.5	10	3	11	25.8	—	—	21.0	23.9	7.8
21.5	22.5	15.5	12	3	11	10.9	7.9	7.9	30.9	7.8	8.7
21.5	22.5	12.5	10	2	11	15.8	20.8	6.9	28.8	6.9	26.7
—	22.5	13.5	—	4	11	—	6.9	7.9	—	23.9	26.8
21.5	21.5	15.5	10	3	11	—	6.9	—	23.9	—	—
—	21.5	13.5	—	5	11	—	27.8	26.9	—	21.7	7.6
—	25.5	15.5	—	6	14	—	25.7	9.9	—	7.7	5.7
	—	25.5	15.5	—	6	14	—	29.0	7.9	3.11	4.11
										194	165

Վեգետացած աշխատավորություն  
առաջանական թափանց սկզբանութեալը

Վեգետացած աշխատավորություն  
ամերիկական օբյեկտներ

ОТЧИСЛЮЩИЕ ДРУГИМ РЕВНОСТЬ

1. Е. А. ЛЕСЮК.—„Мичуринские сорта плодоягодных растений“. Журн. „Яровизация“ № 3, 1940, стр. 30—53.
2. Е. А. ЛЕСЮК.—„Урожайность мичуринских сортов яблони“. Журн. „Земледелие и плодоводство“ № 2—3, 1938 г.
3. Отчеты Ленинаканского опорного пункта Плодовиноградной и Селекционной станции НКПС Арм. ССР за годы 1936, 1937, 1938, 1939, 1940, 1941.
4. И. В. МИЧУРИН.—„Помологическое описание“ изд. Сельхозгиз-ОГИЗ 1940 г.
5. И. В. МИЧУРИН.—Сочинения т. I „Принципы и методы работы“ изд. Сельхозгиз-ОГИЗ 1939 г.
6. Х. П. МИРИМАНЯН.—„Черноземы Армении“ изд. Академии наук СССР 1940 г.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

հ. 2<sup>o</sup>

Միջուրինյան խնձորենիների մի քանի սորտերի աճումը Լենինականի	3
բարձրավանդակի պայմաններում . . . . .	4
Խնձորենիների սկզբնական սորտավորակման հոգածասի բնական ու	5
ագրոտեխնիկական պայմանները . . . . .	8
Սորտերի նկարագրությունը, Շափրան Կիսայկա	11
Պեղպլոր Կիսայկա	13
Կանդիլ Կիսայկա	15
Մարմանկա	18
Տրամոր	19
Զմեռային արկադ	22
Կարմիր Շոանդարտ	24
Եղբակացություն	27
Հավելված № 1	28
Հավելված № 2	30
Օգտագործված զրականություն	30 <sup>o</sup>

С. А. АГУЛЯН  
Выращивание некоторых сортов мичуринских яблонь в условиях  
Ленинаканского плато  
Армгиз, Ереван, 1942



Հ. 3 4354 Պատմեր 65թ. Տիրաժ 1000. Տպագրական 2 մամուլ. Մեկ մամուլում 42640  
նշան. Հեղինակային 1,6 մամ. Ստորագրված է տպագրության 10/X 42 թ.  
Հայովետնրատի տպարան, Երևան, 1942

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008503

A II  
18784

ԳԻՒԸ 1 Ռ. 60 4.